




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
✓ 1275

1999



ՉԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԿԱՆՔԸ

(ՊԱՏԿԵՐՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ԺԱՄԱՆԱԿԻՑ)

1796.



(Արտատպւած «ՄՈՒՐՃ» տպագրից)



ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1891

Дозв. цензур. Тифлисъ, 4 Іюня 1891 г.

Типогр. М. Д. Ротинянца, на Гол. пр. д. № 41.

28 1278

41275-60

ՉԱԼԱՐԻՆԵՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ

(Պատկերներ վերջին ռուս-թրքական պատերազմի
ժամանակից)

I

Դ. ԳԻՒՂԻ ՇՈՒԿԱՆ

Արաբսի փերից մի քանի վերստ հեռու՝ Գողթան գաւառի Դ. զիւղում երեք շաբաթ է անձրեւէ զալիս, և այդ պատճառով այնտեղ տիրում է սարսափելի շոք, և փողոցներում հաւաքւել է այնքան փոշի, որ փոքր ինչ սաստիկ հողմը կարող է փոշուամպ բարձրացնել զիւղի վերայ: Քէպէտ արեւը արդէն մայր է մտել և մօտիկ է իրիկնադէմը, բայց զիւղի աջ և ձախ կողմից ընկած ժայռոտ սարերը այնքան ջերմացել են արեգակի կիզիչ ճառագայթներից, որ կարծես օդագոյն կամ, աւելի լաւ, անգոյն բոց են արձակում իրանց վերայից: Փողոցներում մէկ մէկ աչքի են ընկնում այգիներից վերադարձող զիւղացիներ, որոնք խոտերով բարձած ձին, ջորին կամ էշը առաջներն արած՝ յոգնած և դանդաղ քայ-

լերով գնում են տուն, կամ երեւում են սափորները ուսերին և կժերը կռնատակներին աղջկերք, կանայք և երեխաներ, որոնք գնում են աղբիւր գիշերւայ համար ջուր բերելու: Բայց գիւղի հասարակութեան մեծամասնութիւնը այդ ժամին եկեղեցումն է:

Ժամը արձակեց: Կանայք և երեխաները իրանց բնակարաններն են քաշւում, իսկ տղամարդիկ առանձին առանձին կամ խումբ խումբ դիմում եմ դէպի շուկան: Այդ շուկան, ուր կենտրոնանում է գիւղական ժողովրդի հասարակական կեանքը, բռնում է իսկապէս մի շատ փոքրիկ տարածութիւն: Նորա մի կողմում միզանն¹⁾ է, միւս կողմում մի քանի կրպակներ, որոնք շատ անգամ դատարկ և փակ են լինում, երրորդ կողմում սպանդանոցն է: Բայց շուկայի ամենահետաքրքրական մասը այն տեղն է, ուր ժողովում խմբւում է հասարակութիւնը՝ մասամբ տեղաւորելով պատի տակ դրած երկայն գերանի վերայ, մասամբ ոտի վերայ կանգնելով: Այս վերջին մասը նշանաւոր է այն պատճառով, որ այստեղ են վճռւում կամ զոնէ յղանում և վիճաբանութիւնների նիւթ դառնում գիւղին վերաբերեալ զանազան խնդիրներ, որոնց միջոցով կատարւում է մտքերի փոխանակութիւն գիւղացիների մէջ: Այստեղ են հաղորդւում լուրեր մօտալուս և հեռաւոր աշխարհներից, և լրատուն լինում է լրագրութեան հետեւող այս կամ

¹⁾ Գիւղի հասարակութեան կշեռքը:

այն դրագէտը: Այստեղ է յաճախ կատարւում մելիքը¹⁾ իւր դատաստանը: Երբեմն այս շուկան մեծ կենդանութիւն է ստանում, մանաւանդ այն դէպքերում, երբ պատահում է արտասովոր, բայց գիւղացու սրտին մօտիկ մի նոր բան: Լսւում են բացականչութիւններ և կենդանի ծիծաղ, բարձրանում է աղմուկ-աղաղակ: Այդ ժամանակ շուկան յիշեցնում է Հոմերոսի նկարագրած յունական ազգերի աղմկալից ժողովները:

Ահա այստեղ էին դիմում ժամից դուրս եկած մարդիկ: Ամենից առաջ եկան երկու երիտասարդ գիւղացիներ, որոնք ամառ ժամանակ օրւայ մեծ մասը աշխատում են սեփական այգիներում և ձմեռը վաճելում իրանց ձեռքի վաստակը: Միջոցների սղութեան պատճառով նոքա օտարութեան առհասարակ չեն դիմում և միշտ գիւղում ապրելով՝ նոցա հասկացողութիւնները գիւղական աշխարհացեացքի սահմանից երբէք դուրս չեն գալիս. նոքա իսկական հարազատ զաւակներն են Դ. գիւղի: Անցնելով գերանի մի ծայրից՝ նոքա նստեցին միւս ծայրի վերայ: Ընտրել նստարանի այն կողմը, որ սովորութիւնը յատկացրել էր քահանային, ծերերին և իշխաններին²⁾, համարձակութիւն կը լինէր նոցա կողմից: Պէտք է իմանայ իմ ընթերցողը, որ գիւղում անհամեմատ

¹⁾ Գիւղի տաճուտէրը: ²⁾ Իշխան կոչւում է Դ. գիւղում անհասարակ ունեւորը:

աւելի շատ, քան թէ քաղաքում, աւելի է ընկնում այն յարգանքը և մեծարանքը, որ վայելում են հոգևոր պաշտօնեան, ծերը և ունևորը իւր համագիւղացու առջև: Յետոյ երևաց մի այլ գիւղացի: Սորա հագուստը նման է այն երիտասարդների զգեստին, բայց առաւել հին և մի քանի տեղից կարկառուած:

— Ողորմի՛ Ստուած, — ասաց նա՝ նստելով երիտասարդներից քիչ հեռու:

— Ողորմի՛ ծնողացի, — պատասխանեցին մեր ծանօթ գիւղացիները և շարունակեցին իրանց խօսակցութիւնը:

Նորեկը անտարբեր կերպով սկսեց գլուխը այս ու այն կողմը շարժել. կարծես ցանկանում էր իմացնել իւր հարևաններին, թէ նոցա խօսակցութիւնը նորան չէ հետաքրքրում, ուրեմն թո՛ղ համարձակ շարունակեն իրանց զրոյցը: Բայց որովհետև նորա դէմքը յանկարծ փոխեց և լուրջ, մտախոհ կերպարանք ստացաւ, այդ բանից կարելի էր ենթադրել, որ նա այնքան էլ անուշադիր չէ դէպի իւր դրացիների պատմութիւնը: Հարկաւոր էր արդեօք այսքան զգոյշ դիրք բռնել և ապա խորամանկ կերպով ականջ դնել նոցա, այդ չէ կարող ասել նա ինքն էլ: Նա այդպէս էր տեսած, այդպէս սովորած: Ուրիշը լինէր նորա տեղը, աւելի սրտաբաց և աւելի միամիտը, անկասկած, իսկոյն կը մասնակցէր հարևանների խօսակցութեանը: Բայց Ռ. գիւղի իսկական բնակիչը առաւել զգոյշ և խորամանկ և ուշադիր է

դէպի իւր ամեն մի քայլը, քան մենք սովոր ենք կարծել առհասարակ գիւղացիների մասին:

Բայց ահա գերանը քիչ քիչ բռնւում է, և մի քանի րոպէ չ'անցած է՛լ նստելու տեղ չը կայ նորա վերայ: Նորա երկու կողմին խումբ խումբ կանգնած են գիւղացիները: Ես կ'ուզէի նկարագրել այս ամբողջ հասարակութիւնը մանաւանդ այն պատճառով, որ նա է միակ հերոսը, որ պիտի ներկայանայ մեր առջև: Լինէի նկարիչ, ամենամանրամասն ճշդութեամբ ես կ'կենդանագրէի բոլորի դէմքերը և շուրերը և սորա համար կ'ընտրէի այն վայրկեանը և դիրքը, որ ամենահետաքրքրական և բնորոշ գծերով պատկերանար ընթերցողիս առջև Ռ. գիւղի ամբողջ հասարակութիւնը: Բայց կայ բան, որ կարող է կատարել վրձինը և որի համար թոյլ է գրիչը: Ահա ինչու ես կը բաւականանամ միայն մի քանի նկատողութիւններ անելով. իսկ մնացածը թող լրացնէ, եթէ կարող է, ընթերցողիս երևակայութիւնը:

Գերանի վերի ծայրին նստած է պարոն Սարգիսը: Դորան ասում են «պարոն» այն պատճառով, որ նա ոչ իւր հագուստով, ոչ իւր գաղափարներով շատ էլ նման չէ աղաներին, և «աղա» կոչումը նորան չէր սաղիլ: Ռա մի հասակաւոր մարդ է՝ հագուստը եւրոպական, դէմքի արտայայտութիւնը բարի և մեղմ: Խօսելու և լսելու միջոցին նորա երեսին նշմարւում է բարի, անդորր ժպիտ: Նա գիւղի զրազէտներին է, լուսաւոր երկիրներում եղած և այժմ կարծւում

է կեանքը՝ անհոգ և հանգիստ վայելելով իւր բազմամեայ վաստակի պտուղները: Նա սիրում է պատմութիւններ անել իւր ճանապարհորդութիւններից, իւր գլխին եկած պատահարներից, իւր տեսած լսածից: Նա սիրում է կարդալ և կարդալիս նա դարձեալ ժրպտում է, եթէ մինչև անգամ կարդացածը լինի բաւականին տաղտկալի և ոչ ծիծաղաշարժ: Ընթերցման ժամանակ նորա աչքի առջև գալիս անցնում են նոր մարդիկ, նոր արկածներ. այդ բանը նորան հաճութիւն է պատճառում, և ահա թէ նա ինչու է ժպտում: Նա ստանում է բոլորովին հակառակ, տարբեր կուսակցութեան պատկանող լրագիրներ: Բայց տարօրինակ է նորա կարծիքը այդ թերթերի մասին: Նրկուսն էլ հաւասարապէս հաւանում է, երկուսն էլ նա հաճութեամբ և ժպտալով է կարդում, համաձայն է երկուսի իրար բացասող հայեացքների հետ էլ: Նորա միտքը մնում է զանազան աշխարհահայեցողութիւնների ազդեցութեան ներքոյ, և ի՞նչ է դուրս գալիս այդ խառնուրդից, այդ միայն Աստծուն է յայտնի: Որովհետև պարոն Սարգիսը այնքան ընթերցասէր է, հետևում է լրագրութեան, այդ պատճառով հասարակութեան մէջ գլխաւոր լրատուն նա է: Նա հաղորդում է ոչ միայն ընդհանուր նշանակութիւն ունեցող լուրեր, այլ և բոլորովին պատահական, մասնաւոր դէպքեր, որոնք այսպէս թէ այնպէս մտնում են թերթերի մէջ: Այս քաղաքում մեծ հրդեհ է պատահել, այն-

տեղ երկրաշարժ, մի տեղ կարկուտը փչացրել է զիւղացիների արտերը, մի այլ տեղ երաշտութիւն է տիրում, Ամերիկայում տեղի են ունեցել աւերիչ հեղեղներ, Ամերիկայում ծնւել է մի երեխայ երկու գլխանի և այլն: Բայց մի առանձին հետաքրքրութեամբ էին լսում այն լուրերը, որոնք վերաբերում էին վերջին ռուս-տաճկական պատերազմին: Այս տեսակ լուրեր լսելով, հասարակութիւնը յայտնում էր իւր կարծիքները, իւր ուրախութիւնը, զարմանքը, զայրոյթը, և պարոն Սարգիսը, աւելի ևս բարի դէմք ստանալով, սկսում է ժպտալ, և նորա անկեղծ ժպիտը առաջ է գալիս գուցէ այն խոր հաճութիւնից, որ լինում է պատճառը աշխոյժ խօսակցութեան, որ ինքն է հետաքրքրում բոլորին իւր ասած բաներով:

Պարոն Սարգսի կողքին նստած է աղա Փումանը, մի հաստիկ և բարձրահասակ տղամարդ՝ հագուստը ասիական, պսպղուն լաստիկից: Նորա դէմքի արտայայտութիւնն է արտայայտութեան բացակայութիւն: Նւ իրաւ, դորա երեսին նաչելիս, մի կարող է գուշակել թէ ի՞նչ խելքի, ի՞նչ բնաւորութեան մարդ է դա: Բայց նորա թանկագին գօտին և ոսկեայ ժամացոյցը պարզ վկայում են նորա կարողութեան մասին, և իսկապէս նա Ռ. զիւղի ունեւոր, հարուստ բնակիչներիցն է: Գիւղի կենտրոնում բարձրանում է նորա տունը՝ շրջապատւած ահագին պարիսպներով, ինչպէս ֆէօդալի մի ամուր դղեակ: Նաո դահլիճներ և սենեակներ կան այդ տան մէջ կիսաւրոպական և կի-

սաստիական ձևով փարթամ կահաւորւած: Շատ սրն-
դուկներ և արկղներ կան այդ սենեակներում՝ լի եւ-
րոպական և ասիական թանկագին իրեղէններով: Բայց
ամենանշանաւորն է նոցա մէջ մի մեծ երկաթէ սնդուկ,
որի մէջ կողպւած են գիւղացիների գրաւները՝ ոս-
կեայ մատանիներ, օղակներ, ապարանջաններ և այլն:
Այս բոլորը աղա Քումանի փառքի և պարծանքի
առարկան է: Իւր կարծիքով, ինքը շատ խելօք մարդ
է: Այլապէս ի՞նչ հնարով ձեռք կը բերէր այսքան
հարստութիւն: Բայց չը նայելով նորա այդ կարծի-
քին, նա գիտէր խիստ լուրջ կերպով յայտնել ոչ այն-
քան լուրջ կարծիքներ, որոնք սակայն յաճախ հաւա-
նութիւն էին գտնուում ժողովրդի մէջ ընթերցողիս
յայտնի պատճառով:

Ապա հետեւում է Նիազը: Ահա մի մարդ, որի
ներհայտնութիւնը կենդանութիւն է տալիս շրջանին,
խօսեցնում ծիծաղեցնում նորան, որի անունը բերա-
նից բերան է անցնում նոյն իսկ շրջակայ գիւղօրայ-
քում և որի բացակայութիւնը, մահը կարող է ամ-
սոսանք պատճառել և երկար ժամանակ անփոխարի-
նելի և թափուր թողնել իւր տեղը: Նա հասարա-
կութեան հոգին է: Բայց հասարակութիւնն էլ նորա
հոգին է: Առանց հասարակութեան նորա համար
ծանր կը լինէր ապրուստը: Տկար ժամանակ նա ձիով
պիտի գայ շուկայ և ձիու վերայ նստած պիտի խօսէ,
լսէ, ծիծաղէ: Նա բնածին զւարճախօս է, սրամիտ.
բայց նորա սրամտութիւնները յաճախ սահմանից

անցնում են և հասնում արդէն զծուծ ցինիկու-
թեան աստիճանին: Հասարակութեան մէջ նա ար-
տասնում է այնպիսի խօսքեր և անում այնպիսի
շարժումներ, որ նոցա համար մի գրականական բառ
անգամ չէ կարելի գտնել: Նա պարզ խօսող է, ծածկ-
ւել և քաշւել չը գիտէ: Նա երեսով կը տայ իւրա-
քանչիւրի պակասութիւնը, ով որ էլ լինի հակառա-
կորդը—հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, մարդ
թէ կին: Այնուամենայնիւ նա ոչ ոքի չի վիրաւորում.
նա իւր նկատողութիւնները համեմուտ է այնպիսի
ծիծաղաշարժ սրախօսութիւններով, որ մարդուս
մնում է՝ միայն՝ ներքին ամօթը զսպելով՝ ծիծաղել
նորա հետ: Այս տեսակ յատկութեան համար նորա
անունը դրել են «շուն» և նորան այլապէս չեն կո-
չում, եթէ ոչ «շուն Նիազ»: Չը պէտք է զարմանալ,
որ այս անտաշ, տգէտ, բայց միևնոյն ժամանակ խե-
լօք, զւարճախօս և սրամիտ մարդուց ուսումը և
գրականութիւնը կարող էր ստեղծել հասարակական
գուցէ մի նշանաւոր երգիծաբան: Բայց այժմ նա
ծեր է, մէջքը քիչ կռացած, ման է դալիս փայտի
օգնութեամբ: Նա շուտով գուցէ մեռնէ. սակայն
նորա սրամիտ խօսքերը երկար կենդանի կը մնան գիւ-
ղացիների բերնին, և նա գերեզմանից էլ կը շարու-
նակէ ծիծաղեցնել հասարակութիւնը:

Նիազի մօտ նստած է Գրիգորը: Սորա ճակա-
տին ծաւաւած կնճիռները, թաւ յոնքերը և յոգնած,
ճնշող հայեացքը տալիս էին դէմքին մի տեսակ

խորհրդաւոր լրջութիւն: Խօսելու և լսելու միջոցին նա սիրում է կռացած գետնին նայել և իւր հաստ ձեռնափայտով խազել հողի վերայ գծեր և նկարներ: Նորա խօսակցութիւնը ծանր է, մտածելու եղանակը դանդաղ, բայց արտասանած խօսքերը շատ անգամ անհակաճառելի և վճռող: Նորա հետ վիճելիս՝ զիւղացին յաճախ իրան պժար դրութեան մէջ է զգում, հակառակորդի հերքումը ընդհատուում է յանկարծ, և նա զգում է այն, ինչ որ պիտի զգայ մարդս, երբ ձիու վերայ արագ սլանալիս՝ իւր առջև յանկարծ մի բարձր պատնէշ է տեսնում: Գիւղացիները յարգում են նորա խելքը, լրջութիւնը և փորձառութիւնը, և զուր տեղը չեն նորա անունը դրել ծանր ծով: Երկար ժամանակ նա պարապել է առևտրով և, անկասկած, նա յետ չէ մնացել իւր ընկերակից վաճառականներից զանազան խարդախութիւնների մէջ: Բայց դժբաղդութիւնները, եթէ նորա խօսքերով ասելու լինենք, նորա մէջքը կոտրեցին, և նա իւր երկարամեայ փորձերից իւրացրեց այն աշխարհահայեացքը, թէ անպատիժ չը պէտք է թողնել նոցա, որոնք մարդու Վէջք են կոտրում և լեզու կարճեցնում: Եւ իրաւ, նա իրան համարում էր հասարակութեան շահերի պաշտպանը և այդ գերանի վերայ նստած շատ աղաներից նա միշտ հաշիւներ է պահանջում գիւղի վերայ դործ դրած գումարների մասին, ցոյց տալով նոցա մէջ ոչ բոլորովին շիտակ և բաւականին կասկածելի տեղեր:

Պարզ է, որ «մեծամեծները» նորան անկարող են սիրել. բայց հասարակ դասի մօտ նա վայելում է յարգանք և պատկառանք:

Յետոյ գալիս է մի շարք նոր տիպարների, որոնք կազմում են գիւղի, այսպէս ասենք, միջին դասակարգը: Պոցանից իւրաքանչիւրը եղած է օտարութեան մէջ, պարապել է առևտրով, լաւ և վատ ճանապարհներով վաստակել է մի համեստ կարողութիւն և այժմ շատերի նման վայելում է իւր ընտանեկան շրջանում հանգիստ և խաղաղ կեանք՝ իւր տան և այգու վերայ հսկելով: Մի քարի կամ սաքուի կամ գերանի վերայ նստած՝ նոքա սիրում են զրոյց անել, պատմել տեսած լսածից, զանգատուել օրւայ չարիքների վերայ: Առաւօտներ և երեկոները նոքա շուկայի մշտական յաճախողներն են:

Այս դասակարգին է պատկանում և Գրիգորի կողքին նստած Մինասը: Դա յայտնի է գիւղում, իբրեւ ժլատ վերին աստիճանի: Նորա երեսին պախարակում են այդ արատը, բայց նա միայն... ժպտում է: Բայց փորձեցէք համոզել այդ մարդուն, որ ժլատութիւնը լաւ բան չէ: Նա կը պատասխանէ թէ՛ այն, ինչ նա անում է, ժլատութիւն չէ, այլ պահպանողութիւն, և նոքա, որոնք նորան ժլատ են անւանում, չը գիտեն թէ ինչ են ասում: Օրինակ, նորա համար շատ բնական բան է, եթէ նա, ունենալով միջոց, այնուամենայնիւ հանում է իւր կօշիկների հողին, տասը քսան տեղից նորան

կարկատելով, կամ եթէ ուրախանում է, երբ մի երկու գրեանքաց շաքարը կարողանում է տանել մի ամիս և աւելացնել մի քանի կտորներ միւս ամսւայ համար: Նա կ'արդարանայ թէ աղջիկ ունի մարդու տալու, նոցա համար հարկաւոր է պահել, խնայողութիւն անել: Նա հաւատացնում է, որ փողի վերայ զուր տեղը չէ թռչուն (այսինքն՝ արծիւ) նկարւած. նա ունի թւեր, որ կարող է թռչել, եթէ նորան պինդ չը պահես, երկաթէ վանդակում չը պահես: Բայց հեղինակը չէ կասկածում, որ Մինասը իւր աղջկայ հարսանիքին աշխատելու է մի կերպ բանը եօլլա տանել, իսկ որդուն՝ ուսման ժամանակ ստիպելու է պահել իրան, իրան գրկել շատ և շատ կարեւոր բաներից: Ահա մի գիւղական Պլիւշին, որ թէպէտ և այս վերջինիս ալանդակութեանը չէ հասցնում իւր մարդկային արժանաւորութիւնը, բայց որից յայտնի հանգամանքները կարող են ստեղծել մի իսկական Պլիւշին: Յաւալին այն է, որ նա առաջինը և վերջինը չէ Պ. գիւղում. ալլապէս ի՞նչ հարկաւոր էր ինձ անհանգստացնել այդ մարդուն:

Այս գերանի վերայ նստողներից շատերը անգոյն համապատկերներ կամ հակապատկերներ են վերև չիշւած անձնաւորութիւնների: Այդ պատճառով նոցա մասին երկարաբանելը կը լինէր տաղտկալի և աննպատակ: Վան այնտեղ և շատ տարօրինակ բնաւորութիւններ. բայց նոքա՝ կազմելով մի տեսակ բացառութիւններ, կանգնած լինելով բոլորովին

առանձնակի, ընդհանուր հետաքրքրութիւն կարող չեն ներկայացնել: Ահա ինչու ես լռութեամբ կ'անցնեմ և այդ պարոններին:

Պատճառը՝ հեղձիկ օդը, սարսափելի տօթն էր արդեօք, որ թուլացրել էր բոլորին, թէ մի ալ բան, բայց ընդհանուր աշխոյժ խօսակցութիւն սկզբում չէր լինում. նա կատարւում էր բաժան բաժան, կցկուոր: Մէկ խօսող հազիւ մի քանի անտարբեր լսողներ էր գտնում: Ոմանք մէջքները պատին տւած՝ մտքերի մէջ խորասուզւած՝ «տէր-ողորմեալի» սաթէ հատիկներն էին խաղացնում: Միւսները՝ աչքերը գետնին յառած՝ ձեռնափայտով հողն էին խզմզում: Մի քանիսն էլ՝ քթախոտ ծխելով աչքները այս ու այն կողմն էին ման ածում:

Նստարանի երկու ծայրերի մօտ, ինչպէս արդէն ասացի, ոտի վերայ կանգնած խմբւած էին շատ գիւղացիներ: Նոցա մէջ կատարւում էր հետեւեալ խօսակցութիւնը:

— Տղե՛րք, խոստովանք լինի, երեկ լաւ ժամանակ անցկացրինք հա՛, — սկսեց մէկը երիտասարդների խմբի միջից՝ դիմելով իւր ընկերներին:

— Ափսո՛ս, ափսո՛ս, ես չը կարողացայ, — ասաց միւսը, — բանը ծուռ պատահեց, ի՞նչ անես:

— Այս մարդը այնքա՛ն խմած էր, — խօսեց երրորդը՝ ցոյց տալով մի երիտասարդի վերայ, — այնքա՛ն խմած էր, որ, կը հաւատա՞ս, շորերը հազին ջուրն ընկաւ և լողացաւ: Ել գժութիւն չ'մնաց, որ

չ'անէր: Ել շիշեր, բաժակներ կոտրտել, էլ բոլորին մէկ մէկ պաշել, էլ գետնին թաւալւել, էլ գողալ... Ի՛նչ ասես արաւ:

— Բայց, տղերք, էժան չը նստեց ինձ երեկւայ քէֆը հա՛, — սկսեց այն հերոսը, որ արբած ժամանակ այնքան գոլթիւններ էր արել: Մի կարմիր տասանոցը գրպանիցս հօ տարաք, այդ դեռ ոչինչ. բայց մինչև հիմա էլ զլուխս այնպէս սաստիկ ցաւում է, որ ասես գլխումս գնդանի վերայ երկաթ են ծեծում:

Այդ խօսողները երիտասարդներ էին և այն մարդկանցից, որոնք կեանքից ուրիշ բան չեն պահանջում, բացի անվերջ զւարճութիւններից: Նատ անգամ նոցա կարելի է տեսնել տղս կամ այն այգում հաւաքւած խմբւած: Մի որ և իցէ աւազանի կանաչ ափին կամ դալար մարգի վերայ սոււերաշատ ընկուզենու տակ գորգի կամ կապերտի վերայ նստած՝ նոքա սիրում են լոռօ կամ թուղթ խաղալ կամ հօհօւալով և երգելով գինու շիշեր դադարկել: Մի այլ անգամ նոցա կը տեսնես Արաքսի ափերին, որտեղ նոքա գնացել են ձուկ որսալու և քէֆ անելու նպատակով: Կ'անցնի մի քանի ժամանակ, նոքա խմբով կ'երթան մի հեռու ուխտաղի՝ դարձեալ քէֆ անելու համար: Նոցանից շատերը լաւ որսորդներ են և մէկ մէկ գիւղն են բերում վայրի այծ, աղւէս, նապաստակ, կաքաւ՝ նոյնպէս քէֆ անելու կամ վաճառելու նպատակով: Գիւղի թառ ածողները այդ երիտասարդներից են:

Նոցա խօսակցութեան միջոցին մի այլ խմբի մէջ մէկը սրտնեղւած չիշոցներ, անէծքներ էր թափում մի անյայտ թշնամու վերայ, որ կտրտել փչացրել էր նորա այգու ջահել բարդի ծառերը, որոնց նա աճեցնում մեծացնում էր այն յուսով, թէ նոքա կը բարձրանան և կը հաստանան, և ժամանակով կարելի կը լինի նոցանից գերաններ և տախտակներ քաշել թանկ գնով ծախելու համար: Բայց քինապահ թշնամու ձեռը անխնայ կերպով փչացրել էր նորա գողտրիկ կանաչ ծառերը և ծառերի հետ միասին փշրել էր և տիրոջ յոյսերը և ծրագիրները: Այս տեսակ և աւելի վայրի վրիժառութիւն, պէտք է նկատել, յաճախ է տեղի ունենում Գ. զիւղում, գուցէ և ուրիշ գիւղերում էլ:

— Այն անխղճմտանքին տունը Աստուած քանդի հա՛, — ասում էր գիւղացին վշտահար, — աչքիս լոյսի պէս նրանց պահում պահպանում էի: Հինգ տարւայ իմ չարչարանքս ոտի տակ տւին անասուն անիրաւները:

— Ախր ո՞վ է, մի ասա՛ տեսնենք, այդ նզովւած սատանան, — խօսեց մէկը, — դրա դատաստանը Աստուած անխ: Եդ տեսակ էլ անխղճմտանքութիւն կը լինի՞, որ մարդու մօտ է: Տէ՛ր, մեղա՛ քեզ, Աստուած:

— Հէնց իմ ցաւն էլ դա՞ չի: Խմանայի, էլ էստեղ ի՛նչ բան էի շինում ես: Կը գնայի ունրա այգու բոլոր ծառերը մի մի տակուհան կ'անէի, քար ու

քանդ կ'անէի նրա այգին, աբա կը թողնէ՞ի: Բայց որ չը գիտեմ, ինչ անեմ, ո՞ւմ ետխից բռնեմ, ում ասեմ թէ դո՛ւ ես արել...

Շուկան քանի գնում աւելի և աւելի աշխոյժ կերպարանք էր ստանում: Այն գանգատաւորը արդէն կարողացաւ գրաւել շատերի ուշադրութիւնը: Բայց այդ ժամին շուկայ եկաւ մի գիւղացի և, արագ արագ մօտենալով մելիքին և գերանի վերայ նստած իշխաններին, սկսեց.

—Ա՛յ ժողովուրդ, ա՛յ մելիք, դուք դադաստան արէ՛ք: Էս տեսակ էլ բան չի լինիլ: Ելի էն արջը ծեծել է իմ ծառային:

—Բաղա՞լը, —հարցրին միաբերան աղաներից մի քանիսը:

—Էդ Աստծու պատի՛ժը: Ել ո՞վ պէտք է էդ տեսակ գազանութիւն անի, բացի էն շան ծնունդից: Ծառաս գնում է, որ ծովը ¹⁾ կալի, ջանկարծ վրայ է հասնում էդ արջը, վեր գցում նրան, կրծքին նըստում, ծեծում հա ծեծում, խփում հա խփում: Եւ էդ դեռ հերիք չի: Վեր է առնում նրան ու նազմը գցում, ցելս ու տղմի մէջ տրորում: Ծառաս տուն է գալիս, տեսնում եմ—թրջած է, ցելստուած, քիթն ու պոռնոզը արնած: Հարցնում եմ, ա՛յ տղա, ի՞նչ է պատահել: Ասում է՝ արջ Բաղալը ծեծեց:

¹⁾ Գողթան գաւառում «ծով» նշանակում է աւազան կամ «գետ»:

աղա՛, նա ինձ էս օրս գցեց: Ձեզ եմ դիմում, ժողովուրդ, մելի՛ք, դուք դատաստան արէ՛ք: Թէ էդ գազանին տասը օրով բանտ չը գցէք, ես նրա վրայ գանգատ եմ տալու դատարանումը: Սխր քանի քանի էդ անիրաւը իմ ծառայիս ծեծի:

Այս դիպաւածի պատմութիւնը շատերի ուշադրութիւնը իւր կողմը զրաւեց: Ասողներից ոմանք՝ ականջ դնելով նորեկի գանգատներին, կիսատ ժպտալով զլուսներն էին շարժում. միւսները ծիծաղում էին և միւսնոյն ժամանակ չիշոցներ տալիս Բաղալին. բայց կային այնպիսիները, որոնք իսկապէս բարկացած էին և Բաղալի հասցէին ուղղում էին ամենայն տեսակ պակաս խօսքեր: Այս վերջինները, երևի, նոյնպէս այրւած էին այն մարդուց: Մելիքը իսկոյն ուղարկեց զզիրին Բաղալին կանչելու:

Ահա երկայն սև դաւաղանը ձեռքին կամաց կամաց գալիս է զիւղի բահանան, մի երկայնահասակ պատկառելի ծերունի, մօրուք ու մազերը բոլորովին սպիտակած: Եկաւ և զբարի ողջումս ասելով՝ նստեց Գրիգորի և Նիազի մէջ տեղը, ուր տեղ բաց արին նորա համար: Եթէ ընթերցողը երևակայեց արդէն մի խեղճ զիւղական քահանայ, որ հազիւ կարողանում է հասկանալ իւր կարգացածը, թո՛ղ նա հրաժարէ իւր երևակայած անձից և լսէ հիւղինակին:

Քահանայի անունն է տէր-Սիմէն: Նորա ընթերցումը եկեղեցում այնքան որոշ է, շեշտաւոր և խե-

լացի, որ ամենայն իրաւամբ նորան կարող են նախանձել շատ և շատ պաշտօնակիցներ: Նորա արտաքին կերպարանքը, խօսքը, ձայնը կրում են իրանց վերայ մի տեսակ պատկառելի վեհութեան դրօշմ: Բայց դեռ այս չէ միայն նորա արժանիքը: Նա նկարիչ է, որին պատւէրներ են տալիս մեծադիր պատկերներ եկեղեցիների համար: Նա ճարտարապետ է, որին հրաւիրում են ծրագիրներ նախագծելու նոր շինութիւնների համար: Նա բժիշկ է, որ գրում է դեղատոմսեր լատիներէն տերմիններով: Նա դեղագործ է, որ պատրաստում է դեղեր հիւանդների համար: Ահա մի մարդ բնութիւնից օժտւած բազմակողմանի քնդունակութիւններով, որոնց վիճակւած չէ երբեք զարգանալ աշխարհի շրջանում, որի հասարակական կեանքը կենտրոնանաւում է իմ նկարագրւած շուկայում: Եւ ես կարող չեմ ասել թէ նա մի հովիւ է՝ իւր անձը դրած իւր հօտի համար: Նա հեռու է կատարելատիպ լինելուց:

Գրիգորը, իւր քթախոտի տուփը բաց արած, մօտիկացրեց տէր-Սիմոնին, որից նա վերցրեց իւր աջ ձեռքի բոլթ ու ցուցամատով, և սկսեց քաշել: Երբ Գրիգորը պատմում էր նորան արջ-Բաղալի սխրագործութիւնը, քահանան շարժում էր իւր գլուխը, որի խորհուրդը այն էր թէ ի՞նչ կարող ես անել այդ վայրենի մարդու հետ. նա անուղղելի է:

— Յետոյ ինչով վերջացաւ բանը, — հարցրեց նա:

— Ուղարկել են յետեւիցը, գալ տեսնենք, պատասխանեց Գրիգորը:

— Դա այն տեսակ մարդ է, — ասաց տէր-Սիմոնը, — որ քանի լաւ վարւես հետը, այնքան երես կ'առնի, քանի կամաց խօսես, այնքան ձայնը կը բարձրացնի, կարծելով թէ հակառակորդը իրանից վախեւում է: Այդպիսի մարդկանց աչքին պէտք է երևաս. այդ հնարով միայն նոցա կարելի է սաստել:

— Դրուստ ես հրամայում, տէ՛րտէր:

Մի անգամ նրան ես մի ապտակ եմ տւել, ձայնը միանգամից է կտրել. այդ ապտակը նա չի մոռանալ մինչև մահը:

Վերջապէս գգիրը վերադարձաւ: Նա ասաց թէ արջ-Բաղալը նորան յիշոցներ է տւել, դուրս արել տանից և ասել թէ նա այդօր շուկայ չէ գալու. ով բան ունի, ինքը գնաց նորա մօտ:

Մեղիքը բարկացաւ գգիրի վերայ և հրամայեց, որ գնաց, ինչպէս լինի, քաշ ապ բերի:

— Նա ինձ կը ծեծի, Աստուծ վկայ է, նա չի գալ, — ասաց գգիրը:

— Գնա՛, ասում եմ... բայց չէ՛. կանգնի՛ր միասին գնանք:

Մեղիքը և գգիրը ուզում էին գնալ, բայց ջանկարծ դէմադէմ կողմից երևաց ինքը արջ-Բաղալը: Եւ իսկապէս մի արջ: Եթէ փոքր ինչ մեծացնեմ խօսքս, ես դորան կարող եմ անւանել մի Վալիբան, մարդու անդրադատմական նախատիպարը, որ այնքան

հետեւ է քաղաքակրթիւնից, որքան փայլուն միջատը երկնային աստղից: Դորա մասին այն կարծիքը կար պիւղում, որ նա առանց հացի կարող է ապրել, բայց առանց յիշոցների—երբէք:

Խռատ շնչառութեամբ նա եկաւ կանգնեց մեկիքի դիմաց՝ կարմրած աչքերը շուած նորա աչքերին, բերանը կիսաբաց, շրթունքը դողդոջ,—և այս ամենը անում էր այնպիսի տպաւորութիւն, որ նա կարծես պատրաստ էր, ամբաստանութեան առաջին խօսքը լսելուց յետոյ, անվայել յիշոցներ թափելու բոլորի վերայ առանց խտրութեան: Բայց արդեօք վախը նորան պահեց թէ այն չնչին յարգանքը, որ նա տածում էր դէպի հոգեւոր պաշտօնեան, նա առաջ համբերութեամբ լսեց մեկիքից մեղադրական առաջին խօսքերը և ապա ընդհատելով նորան՝ սկսեց բաւական քաղաքավարի.

—Ես դրա հէրը անիծեմ, էդ շուն շան որդի մարդուն: Էս քանի անգամ է նա գալիս է իմ ջուրս կտրում: Դեռ արեւը սարի տակին է, դեռ տասը արշին կայ մինչև ժամերը տալը, էդ էշ աւանակը եկել է ծովս կալում: Էդ նզովւածն սպանելը քիչ է, ես դրա մարդ ասողին...

—Լեզուդ քեզ քաշի՛ր, անպիտա՛ն, անամօ՛թ, չի էլ ամաչում հասակիցը,—Բաղալի խօսքը կտրեց աղա Թումանը, խորը վիրաւորւած վիճելով, որ այդ աղքատ այլանդակ թշուառականը իշխանների և մանաւանդ իւր ներկայութեամբ յանդգնում է ձայնը

այնքան բարձրացնել և անվայել խօսքեր արտասանել:

Բաղալի կատաղութիւնը դորանից յետոյ հասաւ իւր վերջնակէտին, որովհետև, առաջինը, նա իրան արդար էր զգում, և երկրորդը, ծառային ծեծելուց յետոյ շատ միջոց էր անցել, և նորա շարութիւնը դեռ էր նստել: Կան մարդիկ, որոնց բարկութիւնը նման է կրակած վառօդի—կը փռթկայ և իսկոյն կը հանգչի, բայց կայ մի ուրիշ բարկութիւն, որ իրան կարծես ուտում է, որ երկար ժամանակ չէ կարողանում մարել հանգստանալ: Այս վերջին տեսակիցն էր և Բաղալի բարկութիւնը: Այս մարդը իրան կորցրեց, իրան ամենևին մոռացաւ: Նա իւր ձայնը երկինք հասցրեց. յիշոցները ժայթքում էին նորա բերանից, ինչպէս աղտեղութիւնը կեղտոտ խողովակից: Մէջ տեղ մտան հասարակութիւնից անտէր, որոնք իրանց աղաղակներով կարծես ուզում էին իրարից դերազանցել, և վերջումը բարձրացաւ այնպիսի մի աղմուկ, որ գիւղի հեռավոր տներում լսելի եղաւ, և այս աղմուկի մէջ կանայք կարողանում էին ջոկել իրանց ամուսինների ձայները և սրտնեղւած բացականչում էին:

—Էլի շների նման սկսեցին իրար գզգզել. առանց կուի հօ բան չեն անիլ. դրանց տունը Աստուած քանդի:

Բայց յանկարծ պատահեց մի բան, որ մի քանի րոպէում հանդարտեց ամբոխը: Միայն Բաղալն էր, որ դեռ էր հանգստացել, սիրտը թփթփում էր,

չրթունք ու պուռնգները դողում, և էլի լսում էին երբեմն յանդիմանութիւններ և այս ու այն անձին ուղղած լիշոցներ: Բայց շուտով նա ևս հանգարուեց, և շուկայում տիրեց խորին լռութիւն: Ինչպէս մի գետ՝ գարնան անձրեւներից յորդացած ուռչում է մեծանում և գողալով գլորում իւր փրփրած ալիքը, բայց ամառը գալով դարձեալ հանգստանում է և ստուում, նոյնպէս և այս ամբոխը, որ քիչ առաջ յուզեց ու տակն ու վրայ եղաւ, այժմ լռել է և ականջները սրած՝ սկսում է լսել մի ծերունու, որ բոլորի աչքի առաջ, շուկայի մէջ տեղում կանգնած՝ պատրաստ է մի ինչ որ վատ բան գուժելու: Այդ ծերունին յայտնի է, իբրեւ բռնակալ իւր ընտանիքում, որից ոչ թէ վախենում, այլ սարսափում են տանեցիները: Նորա շուկայ գալը մի արտակարգ բան էր. ահա ինչու շատերի ուշադրութիւնը գրաւեց նա նոյն իսկ իւր երեւոյլը:

—Այ՛ ժողովուրդ, — սկսեց ալեորը վախեցած մարդու ձայնով և թուքը կարծես դժարութեամբ կուլ տալով, — մեր Թոմասը մի շատ վատ լուր է բերել քաղաքից: Նա ասում է թէ էնտեղ խօսում էին, իբր թէ Չալաբիները Արաղի ափերին մօտիկացել են և շուտով մտադիր են մեր կողմերի վրայ յարձակւելու:

Այս խօսքերից ամբողջ հասարակութիւնը սարսափեց այնպէս, կարծես կայծակ վայր ընկաւ երկնքից: Շատերի սրտերը այնքան անհամբեր, այն-

պիսի՛ եռանդով սկսեցին բաբախել, որ կարծես ուռում էին դուրս պրծնել կրճերի տակից և հեռանալ թագնել աշխարհի ծայրերում: Մանաւանդ սոսկալի էր այդ լուրը այն պատճառով, որ նա դուրս եկաւ մի խտադէմ, դաժան ալեորի բերնից, մի ալեորի, որի «չար աչքից», գիւղացիների ասելով, կանաչ ծառեր էին չորանում, որի «չար շնից» (նախաս) բացւած ծաղիկներ էին թառամում:

Այս լուրը լսելուց յետոյ՝ հասարակութեան մէջ կային այնպիսիները, որոնց սրտում չղացաւ մի տարօրինակ ցանկութիւն — վեր կենալ իսկոյն և եթ, գնալ տուն, դուռ ու դարպասները պինդ փակել, կարծես բանը այնտեղ էր հասել, որ թշնամիները գիւղի տակին կանգնած էին արդէն: Միւսները, զլխաւորապէս աղաններից, զգացին իրանց մէջ ոչ պակաս օտարոտի զգացում — անդիմադրելի սէր դէպի այն կորիճ երիտասարդները, որոնք, ինչպէս ասացի, ծնւած են քէֆի համար և զիտեն զէնքի հետ վարւել, բայց որոնք այլ ժամանակ այնքան էլ համակրութիւն չեն վայելում այն լուրջ և զգաստ և խտապահանջ աղանների մօտ: Մանաւանդ աղա Թումանը կ'ուզենար վեր կենալ իւր տեղից ձեռքը մեկնել, ներդուրթիւն խնդրել բոլոր մարդկանցից, որոնց նա այսպէս կամ այնպէս վիրաւորել էր առաջ, քաղցր աչքով նայել նոցա երեսին, քաղցր խօսքեր ասել նոցա և առատ ընծաներ խոստանալ: Նա այդ ամենը կ'անէր, կ'անէին և շատերը, եթէ այդպիսի

փոփոխութեան խորհուրդը պարզ չը լինէր բոլորի համար: Ընդհանուր երկիւղը, ինչպէս մի թալիսման, բոլորի սրտերը և մտքերը շաղկապեց իրար հետ, ամենեքեան մոռացան իրանց սրտերում պահած նենգութիւնը, ոխը, թշնամութիւնը, և բոլորեքեան հաւասարապէս զգացին փոխադարձ օգնութեան կարօտը և կարեւորութիւնը:

Բայց ո՞վքեր են այդ Ձալաբիները: Դա մի քրդական ցեղ է, որ կենում է Պարսկաստանում, Մաքուի խանութեան մէջ: Վերջին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, 1878 թւականին, այդ վայրենիները, իրանց շէյխի առաջնորդութեամբ մի քանի պարսկական զիւղեր ասպատակելուց յետոյ, ուշի ուշով սպասում էին կիսալուսնի զրոշակի յաղթանակին, որպէս զի անցնէին Ռուսաստանի սահմանը, դէպի Գողթան գաւառը, այդ հարուստ երկիրը աւերելու և թալանելու նպատակով: Այդ լուրը արդէն վաղուց է տարածւել այնտեղ և տագնապի մէջ է ձգել շրջակայ զիւղօրայքը:

Այդ պատճառով զիւղերում գիշեր ցերեկ հսկում են զինուորած պահապաններ, և աւելի զգոյշ մարդիկ արդէն վաղօրօք թաքցրել են իրանց թանկագին իրեղէնները պատերի մէջ, գետնի տակ և զանազան գաղտատեղերում: Այստեղ դեռ չէին մոռացել Ազատ-խանի հրօսանքների ասպատակութիւնը ¹⁾ և գաղա-

¹⁾ Ազատ-խանը եղել է այս գաւառում 1752 թ. (տես «Ազուլեցցոյքարբառ») Ս. Սարգսեանի:

նութիւնները, և նորա արիւնահեղ կոտորածների պատմութիւնները աւելի ևս սաստկացնում էին ընդհանուրի երկիւղը և սարսափը:

Երբ որ ծերունին գուժեց տխրալի լուրը, առաջին միտքը, որ եկաւ մելիքի գլուխը, այն էր — իսկոյն ուղարկել զգիրին հերթապահ պահապաններին պաշտօնի կանչելու:

— Գալ՛ւստ, շուտ արա գնա պահապաններին կանչի՛ր, — ասաց մելիքը՝ դիմելով զգիրին, — ասա՛ թո՛ղ վեր առնեն իրանց զէնքերը ու գնան դարպասների վրայ կանգնեն: Ասա՛, որ՝ չը մրափեն հա՛, արթուն մնան, իմացա՛ր:

Այս խօսքերը լսելուց յետոյ, զգիրը, որ կարծես արդէն պատրաստ էր վազելու, իւր կոտրած բարակ ձեռափայտը քարերին չիւլչիւկացնելով՝ շտապով հեռացաւ շուկայից:

— Ի՛է հիմա խորհուրդ արէք տեսնեմ, ի՞նչ էք մտադիր անելու, — սկսեց աղա Թումանը, որ կարծես բոլորից շատ էր անհանգստանում գալիք աղէտի առիթով:

— Ես կարծում եմ, որ ամենից առաջ մենք պէտք է իմաց տանք գաւառապետին, — ասաց պարոն Սարգիսը, — նա կ'ուղարկէ զինւորներ մեր զիւղերի վրայ բաժանելու:

— Եղ հօ կը լինի առանց մեզ էլ, — մէջ մտաւ Նիազը, — դու ասա՛ տեսնեմ՝ մե՞նք ինչ անենք: Կարելի է հէնց օրը էգուց, հէնց էս գիշեր վրայ են տալիս էդ անիրաւները:

—Տեսնես աչդ աւագակ մարդկանց թիւը ո՞րքան է,—խօսեց տէր-Սիմոնը: Եթէ այնքան էլ շատ չ'եղան, ասեմ, շատ դժւար չի լինիլ նրանց հետ գլուխ դնելը: Բայց եթէ անպիտանները մորեխի նման թափւեցին...

—Տղե՛րք, ջա՛հիւներ,—բարձր ձայնով սկսեց Գրիգորը՝ դիմելով կտրի՛ճ երիտասարդներին,—բան է եթէ, Աստուած ո՛չ անի, էդ շները եկան, ասէ՛ք տեսնեմ, սի՛րտ կ'առնէք նրանց առաջը՝ դուրս գալու:

—Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ,—կարծես երիտասարդների ներկայացուցիչ համարելով իրան՝ պատասխանեց նախնիթաց օրւայ քէֆի հերոսը,—էլ Աստուած ո՞ր օրւան համար է մեզ տւել ձեռք ու սիրտ, որ դժւար ընկած տեղը՝ ձեռքներս ծալենք ու ետ կենանք: Դուրս կը գանք թէ խօսք է: Նրանց հէ՛րն էլ չեն անիծիլ:

—Ղո՛չաղ տղայ, զո՛չաղ տղայ, կերածդ հալալ լինի,—սկսեց խրախուսել աղա Թումանը,—բանը կաքաւ ու նապաստակ որսալը չէ, բանը թշնամու առաջ դուրս գալն է ու նորա հետ կուտելը: Սրանք կ'անեն, ինչ ուզում էք, սրանք զոչաղ են,—այս ասելով նա դիմում էր իշխաններին: Նստանց ճանաչում եմ: Այս վերջին նախադասութիւնը արտասանելիս՝ աղա Թումանը՝ կիսաժպիտ, աչքերը կիսախուփ արած՝ խորհրդաւոր կերպով շարժում էր իւր գլուխը՝ նայելով երիտասարդների վերայ, ինչան աչն բանի, որ նոցա ոյժը և քաջութիւնը իրան վաղուց և քաջ յայտնի է:

—Ժողովո՛ւրդ,—խօսեց Գրիգորը,—ով աւելորդ թւանդ ունի, թո՛ղ տայ չ'ունեցողին: Մեր տանը չորսը պատրաստ կայ. մէկը ինձ, միւսը եղբօրս, միւսներն էլ նրան, ով չ'ունի:

Հրացանների մուշտարիներ գտնւեցին:

Պարոն Սարգիսը, աղա Թումանը և մի քանի ուրիշները առաջարկեցին իրանց կողմից—որը՝ հրացան, որը՝ զնդակներ, որը՝ վառօդ, որը՝ պիստոն, որը՝ կոտորակներ:

—Ղու հօ երկուսը ունես,—ասաց Գրիգորը՝ դիմելով ժլատ Մինասին,—ինչո՞ւ մէկը չես տալիս չ'ունեցողին:

—Հէ՛ր օրհնած, — պատասխանեց Մինասը՝ ժպիտը բերնին,—տեղ անելը դժւա՞ր է ի՞նչ է: Մէկը ես վեր կ'առնեմ, մէկն էլ կնիկս:

Այս խօսքերը ընդհանուր ծիծաղ չարուցին, և ընդդիմախօսելու փոխանակ՝ շատերը միայն գլուխները շարժեցին:

Շուտով եկան հերթապահ պահապանները հրացանները ուսերից կախ արած և զոտիներին կապած խանչալներ:

—Ա՛յ տղերք, չը քնէք հա՛, — սկսեց զգուշացնել աղա Թումանը, չը լինի թէ աչքներդ խուփ անէք: Երկիւղալի ժամանակ է, մարդ պէտք է արթուն կենայ: Գիւղի դարպասները պինդ կը փակէք ու յետոյ կը բարձրանաք վերև: Դէ՛ զնացէ՛ք:

Չը քնէք հա՛, էլի ասում եմ:

— Միամիտ կացէ՛ք, ձայն ձայնի տւին պահապանները և զանազան կողմերով հեռացան շուկայից:

Արեւելեան հորիզոնում ժայռոտ լեռների զլխից ծանր ծանր բարձրանում է կոլով լուսինը՝ արեան գոյնով ներկւած: Լուսնի ահագին մեծութիւնը և կարմիր գոյնը երկիւղ և կասկած յարուցին առանց այն էլ վախեցած սնապաշտ գիւղացիների սրտում, և, անհանդիստ կերպով ցոյց տալով դէպի լուսինը, ասում էր մէկը միւսին:

— Տե՛ս ի՛նչ մեծացել ու կարմրել է տնաքանդը: Էս տեսակ լուսին օրումս չեմ տեսել, Աստուած վկայէ: Զը լինի խաւարելու օր է էսօր: Տէ՛րտէր, օրացոյցը մտի՛կ ես արել, խաւարելու մասին բան չը կա՛յ մէջը: Քահանան ասաց թէ լուսինը կարգին լուսին է, և օրացոյցում ոչինչ չը կայ: Զը նայելով դորան, հասարակութեան միջից շատերը հաւատացին, որ բոսորային լուսինը անշուշտ կոտորած կամ ուրիշ աղէտ է գուշակում: Միւսները, աւելի հասկացող մարդիկը, աշխատելով անտարբեր ձեւանալ, կրկնում էին թէ լրացած լուսինը այնպէս է լինում և ոչ ուրիշ տեսակ:

Վերջապէս ժողովուրդը սկսեց խումբ խումբ ցրւել, և հինգ րոպէ չ'անցած՝ էլ մի հատ մարդ չը մնաց շուկայում: Շուկան դադարկեց ու ստուեց:

II

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԳԻՇԵՐԸ

Խորին գիշեր է: Այն բոլորը, ինչ շնչում է, քնած է Դ. գիւղում: Նիրհում են և ծառ ու թփերը, և շնչին հողմ անգամ չէ խանգարում նոցա քունը: Այդ լուութեան մէջ լսւում են միայն երկու չարագուշակ ձայներ, և վա՛յ նորա օրին, ով կ'արթնանայ յանկարծ, և ահանջին կը հասնեն այդ ձայները: Գիւղի կենտրոնում աղա Թումանի տան կից պարտիզում սալորենու տակ երկաթէ շղթայով կապւած ահագին շունը ոչ թէ հայում, այլ ոռնում է այդ ժամին, և շան ոռնոցը, գիւղացու սնոտիապաշտութեամբ, մահւան կամ մի այլ աղէտի գուշակութիւն է: Գիւղի այս կամ այն ծայրից լսելի էր լինում երբեմն շների հաչոց, որոնք արթնանալով երեւի յիշոցներ էին տալիս ոռնացող շանը, որ այնքան յանդուգն կերպով խանգարում էր իրանց հանգիստ քունը: Այդ լուսնկայ խորհրդաւոր գիշերը սարսափեցուցիչ էր մանուսանդ այն պատճառով, որ երկու բուեր, Աստուած գիտէ գիւղի որ փլատակներից, ախո՛ւր և պարբերաբար իրար ձայն էին տալիս՝ կարծես գիշերուայ ահարկութիւնը լրացնելու համար: Այսպիսի գիշեր սովորական է Դ. գիւղում: Բայց նա ահռելի էր և չարագուշակ առանց այն էլ վախեցած սնապաշտ գիւղացիների համար: Պատահում էր, որ այս կամ այն կոորին, կամ պատշգամբում, կամ

բակում յանկարծ քնից սթափւում էր մէկը, տեղում նստում և, ականջ դնելով շան և բուերի ձայներին, անհիծում էր նոցա՝ ասելով ինքն իրան՝

— Ձեր զլուխները ուտէք, հա՛, ձեր զլուխները:

Բայց զօրեղ քունը խփում էր դարձեալ նորա աչքերը, և նա թուլացած ընկնում էր անկողնի վերայ և կրկին խոր քնի մէջ ընկղմւում:

Բաղալը այդ ժամին իւր բակում հասիլի վերայ տարածւած՝ խումփում էր այնպիսի պէս-պէս վայրենի հնչիւններով, որ կարծես կռիւ էր սկսել այնտեղ շան, արջի, բորենու և օձերի մէջ, և զարմանալի էր, ինչպէս նա չէր արթնանում ինքը իւր ձայնից կամ չէր սարսափեցնում իւր տանեցիներին:

Աղա Թումանն էլ մի պահապան էր վարձել իւր տան վերայ հսկելու. բայց, չընայած դորան, նա շատ անհանգիստ էր, երկար ժամանակ նա չէր կարողանում քնել և շուտ շուտ շուտ էր գալիս երկու կողքի վերայ:

Ոչ պակաս անհանգիստ էր և ժլատ Մինասը: Մուկն էր արդեօք, որ անցաւ նորա գլխատակով, թէ մի այլ բան, բայց նորան արթնացրեց մի թխկոց: Սթափւած նա նստեց իւր տեղում, չորս կողմը շրջեց իւր աչքերը, սկսեց ականջ դնել— ոչ մի ձայն, բացի շան ոռնոցից և բուերի սգաւոր վայունջից: Նա զգում էր, որ քունը հեռանում է իրանից: Նա զգաց իւր հոգում մի ինչ որ ծանր ճնշող բան: Սիրտը, որ քիչ առաջ հանդարտ բաբախում էր իւր համար,

այժմ աւելի արագ և ուժեղ է դարձնում իւր զարկը: Սրտատրոփ նա վեր կացաւ տեղից, դնաց դարպասի մօտ և տեսաւ փակ է. մի րոպէ արձանի նման կանգնած ականջ դրեց և յետոյ վերադարձաւ և թաղից վերցնելով հրացանը՝ բերաւ դրեց գլխատակին, ինքը պառկեց և աչքերը խփելով փորձեց քնել: Բայց տարօրինակ բան. նա շատ ուզում էր քնել, մարմինը բոլորովին թուլացած էր, աչքերի կոպերը խփւում էին, բայց նա դարձեալ արթուն էր ու մի ինչ որ բան խառնում տակն ու վրայ էր անում նորա ուղեղը: Այդ վախն էր, որ նորա աչքի առաջ ծնեցնում էր շատ սարսափելի տեսիլներ:

«Տեսնես այն պահապանները արթուն են թէ հանգիստ մրափում են իրանց համար», մտածում էր նա, և նորա մտքում արդէն պատկերանում էին զինուորած չալաբիները, որոնք զաղտուկ բարձրանում էին զիւղի դարպասի վերայ, սպանում քնած պահապաններին, մտնում են գիւղը և կոտորած անելու վերայ են: Կամ ինքն իրան հանգստացնում էր, և քրդերի տեղակ նորան ներկայանում էին գողեր, որոնք, ով գիտէ, ծածկւած են մի տեղ տան մէջ և շուտով գուցէ յարձակեն: Նա կարծում է թէ գողը մի հատ է, առաջ ուզում է դիմադրել, բայց երբ տեսնում է նորա ձեռքին բաց սուրը, ընկնում է ոտները, խնդրում, աղաչւում, որ խնայի... բայց երբ բանը գալիս է նորան, որ նա պիտի բանայ իւր սնդուկը և կարմիր տասանոցները և սպիտակ աբա-

սինները դիզէ գողի առջև, նորա արիւնը խառնուեմ է, ձեռքը տանում է գրպանը, իբր թէ բանալիք հանելու, բայց բանալիքի փոխարէն հանում է ատրճանակը, կրակում, — և հառաչանքով արիւնաթաթախ գողը գետին է ընկնում... կամ նա ափսոսում է, որ այդպիսի երկիւղալի ժամանակ նա քաղաքում չէ, մի հեռու բազմամարդ տեղում, ուր... այստեղ նորա մտածողութեան կապը կտրւեց, վազուց խիւած աչքերի կոպերը անշարժացան, և նա քնեց:

Գիշերւայ կիսից բաւական միջոց է անցել: Լռել է ամենայն մի ձայն, մինչև անգամ շան ոռնոցը: Քնի ամենաքաղցր և ամենապինդ ժամանակն է:

Մինչդեռ շինական հասարակութիւնը այսպէս անդորր նիրհում է, թող տո՛ւր ինձ, ընթերցո՛ղ, մի քանի խօսք ասեմ Դ. գիւղի մասին: Ինչպէս մի վիպասան, որ սիրում է նկարագրել իւր հերոսին, մինչև անգամ նորա տուն ու տեղը, նիստ ու կացը, նոյնպէս և ես կամենում եմ նկարագրել իմ հերոսին — մի ամբողջ ժողովուրդ — և նորա տունը — մի ամբողջ գիւղ:

Երեակայեցէ՛ք այդ գիւղի երկու կողմից, արևելքից և արևմուտքից, ընկած երկու ժայռոտ լեռնաշղթաներ, որոնք հիւսիսից գնում են դէպի հարաւ և միայն գիւղի տակին սկսում են իրարից հեռանալ: Իսկ հեռու-հեռու երևում է Արաքսը, ինչպէս արծաթէ փայլուն ժապաւէն: Արևելեան լեռնաշղթայի

ուղղութեամբ ընկած է մի լայն քարքարոտ տարածութիւն, որի վերայ հազիւ հազ նշմարւում է մի բարակ առւակ: Դա գիւղի գետակն է: Բայց տարօրինակ բնաւորութիւն ունի այդ գետակը: Երբեմն նա այնքան բարակում է, որ նորա ջրի վերայ յաճախ կռիւներ են պատահում գիւղացիների մէջ: Բայց զարնան կամ ամառւայ սաստիկ անձրևների ժամանակ նա այնքան մեծանում է և ուռչում, որ՝ հասնելով հաստաբուն ընկուզենիների բարձրութեանը՝ ողողում տանում է կամ ցեխի մէջ թաղում ամբողջ այգիներ, անդաստաններ և տներ. պատահել է, որ տասնեակ մարդիկ և ընտանի կենդանիներ զոհ են գնացել այդ կատաղի հեղեղառի հոսանքին: Այդ միջոցներին գետակը ահուելի ձայն է հանում, գետինը դողում ու դըրդում է, և գիւղի հեռաւոր ծայրերում անգամ արձագանք է տալիս նորա վայրենի աղաղակը, բարձր գրնդիւնը: Ահա ինչու, երբ թրխւում է հիւսիսակողմը, նամանաւանդ երբ կապարի կամ պղնձի գոյն է տոանում այն հորիզոնը, գիւղացիների կրծքերը այնքան ծանրանում են ահից, որ կարծես երկնքի թխպերը նոցա սրտերի վերայ են դիզւում: Մի անգամ, երբ այդ հեղեղատը՝ շատ այգիներ և տներ աւերելով՝ իւր ետեւից թողեց միայն հարթ տարածութիւն, ցեխ և տղմից մի բարձրաւանդակ, գիւղում սկսեցին երազներ տեսնել թէ շուտով լինելու է աշխարհի կատարածը, երկրորդ ջրհեղեղը:

Այո՛, տարօրինակ է այդ գետակը, բայց աւելի
ևս զարմանալի է այն ժողովուրդը, որ այդ հեղե-
ղատի բերանին կանաչ այգիներ և անդաստաններ է
գցել, որ մշտական կռիւ է մտած բնութեան այդ
անդիմադրելի ոյժի հետ, որ նորա փլատակների վե-
րայ նորանոր հոյակապ շինութիւններ է կառուցանում,
նորանոր այգիներ է գցում, կարծես ուզում է ասել
գետակին թէ լսեսնենք մեզնից ո՞վ կը լինի յաղթո՞-
ղը: Գուցէ բնութեան հետ մղւող այդ մշտական
կռիւն է, որ այդ գիւղի ազգաբնակութեան ոգուն
հաղորդել է մի տեսակ արտասովոր տոկունութիւն,
շինականութեան մեծ պաշար:

Գետակի ձախակողմեան ավերից սկսւում են
գիւղի այգիները, որոնք, գնալով դէպի արևմուտք,
սկսում են մէկ մէկ երևացնել իրանց միջից փոքրիկ
տնակներ և մեծ շինութիւններ: Աղաների տները գե-
ղեցիկ են միայն համեմատած աղբատիկ խրճիթների
հետ. նոցանից շատերը թէպէտ ահագին են, բայց
մեծ մասամբ շինւած են անճաշակ: Այնուամենայնիւ
Պ. գիւղում կան այնպիսի շինութիւններ, որ իսկապէս
արժանի են որ և է քաղաքի կենտրոնում լինելու թէ
իրանց ճաշակով թէ գեղեցկութեամբ: Երևակայեցէ՛ք
ձեր առջև մի երկայն և բարձր պատշգամբ՝ 8—10 հաստ
և սպիտակ սիւներով, և այդ պատշգամբի գլխին մի
նոյնանման պատշգամբ նոյնքան սիւններով: Այդ
սիւնները միանում են իրար հետ վերևում կանոնաւոր
կամարաձև կիսաշրջանով կամ յունական օմեղապի

նման շինւածով: Այդ սիւնները՝ զրկւած լինելով
դրւագիւներից՝ տպաւորութիւն են գործում իրանց
մեծութեամբ և սպիտակ, մաքուր կերպարանքով:
Ներքին յարկի երկու կողմից քարաշէն աստիճաննե-
րով կարելի է բարձրանալ և մոնել սենեակները: Այս-
պէս է աղա Թումանի և մի քանի ուրիշ աղաների
տան առաջնակողմը: Բայց նորա արտաքին տեսքը
լրացնելու համար պէտք է յիշել և նորա առջև
սալաչատակ ուղիներով կտրատւած բակը, ուր բարձ-
րանում են պողատու սուերաշատ ծառեր, և երևում
են այս ու այն կողմում ընկած ածուներ՝ հոտաւէտ
գոյնզգոյն ծաղիկներով. պէտք է յիշել և պարսպից
անցկացրած խողովակը, որից քչքչալով թափւում է
վճիտ ջուրը և ոլոր-մոլոր պտոյտներ անելով՝ անց-
նում է ծառերի տակով կամ գնում լցնում բակի մէջ
տեղում շինւած գեղեցիկ աւազանը:

Այսպիսի մի շինութիւն՝ փոքրանալով և տգեղա-
նալով համեմատ է չքաւոր գիւղացու տանտիպարին,
որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ահագին բարձր սենեակ,
որի մէջ տեղում ցցւած են ծուխ ու մսից սււացած
փայտէ սիւներ, մի սենեակ, որ ծառայում է ամեն
բանի տեղ և որ կոչւում է ստուն: Բարձր պատերով
շրջապատւած պատը Պ. գիւղի տների կարևոր և ան-
բաժան մի մասն է: Այսպիսի տանն մէջ է կենում և
արջ-Բաղալը և նորա նման շատ Բաղալներ:

Բայց բաւական է: Ես չեմ կամենում երկար
ու բարակ նկարագրել ոչ այդ գիւղի ծուռ ու մուռ,

ներ, թզոտ կամ քարքարոտ փողոցները, ոչ գիւղը տանող ճանապարհների վերայ շինւած հինգ ահա-գին դարպասները մանր մարտկոցներով, ոչ մեծ քարաշէն եկեղեցին՝ իւր փոքրիկ փայտէ զանգակատնով և զանգակատունը՝ իւր ծռած-թեքւած փայտէ խաչով: Այսքանն էլ բոլորովին բաւական է իմ հերոսի տուն ու տեղը մօտաւորապէս երեւակայելու համար:

Արդէն սկսում է լուսանալ: Ամենից առաջ արթնացաւ զով քամին, որ սլանալով ծառերի միջով՝ արթնացրեց ծառերը իրար ետեւից, տերեւները իրանց սօսաւիւնով արթնացրին թռչնիկներին, որոնք ճռռողով սկսեցին թռչկոտել, սակայն իրանց բներից ոչ այնքան հեռու, որովհետեւ դեռ մթութիւն կար: Մի քիչ էլ անցաւ, ծագեց արեգակը, գիւղի հասարակութիւնը արթնացաւ: Բայց նա արթնացաւ մի նոր աղէտի համար: Ընթերցողս շուտով կը տեսնէ, որ չարագուշակ բուերը և ոռնացող շունը զուր տեղը չէին բարձրացրել իրանց լալազին ձայները. նոքա գուշակեցին միւս օրւայ գալիք անբախտութիւնը, վայրենիների արշաւանքը:

III

Ա Ր Շ Ա Ի Ա Ն Ք

Օրը շաբաթ է, կէսօր: Ոչ միայն կապոյտ երկնքին, այլ և փոքր ինչ վերեւ նայել անկարելի է, այնպէս այրում և կուրացնում են արեգակի ճառա-

գայթները: Հողից և ժայռերից կարծես բոց է բարձրանում: Ծառերը այնպէս թուլացած տխուր կորացրել են իրանց թզոտած կատարները, որ ասես լալիս են ջրի ծարաւից: Այս կամ այն այգում ծառի տակ նստած է շունը, բերանը բաց, լեզուն կախ ընկած. խիստ արագ շնչառութիւնից նորա ամբողջ մարմինը զոդում է այնպէս, ինչպէս մարդը տենդի միջոցին: Հաւ ու յաւաղաններն էլ կուտ չեն անում, այլ դետինը փորած՝ կողքները թեք են տւել հողին և առօք-փառօք մի ոտը բարձրացրել վերեւ, իբրեւ թէ «տեսէ՛ք-մենք ի՞նչպէս ազատ ենք քաղաքավարութեան ճնշող ձեւերից»: Թռչուններն էլ ապաստանւած են իրանց բներում կամ տերեւախիտ ծառերի վերայ: Բայց այդ ժամանակը, երբ, ինչպէս ասում են, կրակ է թափւում երկնքից, լիովին պատկանում է օձերի թագաւորութեանը. պատերի վերայ, խոտերի մէջ կամ կաշկառոտ ճանապարհներին այժմ սողում են նոքա, և վա՛յ նորան, ով մէկի ձեռքը կ'ընկնէ. այդ միջոցին նոցա «կատաղած ժամանակ» է, գիւղացիների ասելով: Ամեն տեղ խորին լուութիւն՝ մեռելութեան ատրիճանին հասած: Բայց ո՞վ կը սպասէր, որ տասը բոպէ չ'անցած՝ ամբողջ այս թմրած գիւղը պիտի արթնանար, տալն ու վերայ լինէր, պիտի բարձրանան այստեղ աղմուկ և աղաղակ, լաց և կոծ, աղօթք և անէծքներ...

Գիւղացիներից ոմանք այդ ժամին այգիներումն են. որը ջրում է բոստանը կամ բանջարանոցը, որը՝

արեւից յաղթահարւած՝ ընկել է մի որ և իցէ սուե-
րոտ ծառի տակ և խոտի վերայ խորը քնել, որը՝
ուշ չը դարձնելով ճակատից ծլծլացող քրտնքին, ուշի
ուշով որոնում է վայրի խոտեր և որոմ իւր բանջա-
րանոցում և քաղահան անում նոցա. որը՝ առւակի
սիզապատ ավին նստած շուտ շուտ երես ու ոտներն
է լւանում աղբիւրի վճիտ սառ ջրով և ականջ
դնում ջրի խորհրդաւոր խոխոջող ձայներին: Գիւղի
շուկան, որ առաւօտեան լի էր ամբոխով, այժմ դա-
տարկւել է: Տղամարդիկ կամ ճաշի են կամ քնած են
ճաշելուց յետոյ: Միայն գործի են այդ ժամանակ
կանայք և աղջկերք: Սովորաբար շաբաթ օրը Գ.
գիւղի կանայք իրանց նւիրում են տուն տեղ մաք-
րելուն, իրանց իստակելուն. լւանում են գլուխները,
լողացնում են երեսաներին և այլն:

Ահա այս գրութեան մէջ էր գիւղը:

Գիւղի գլխաւոր փողոցի մեռելային լռութիւնը
յանկարծ խանգարւեց. գետինը ուժգին տրոփե-
լով՝ մէկը միւսի ետեւից արագ սլացան երեք ձիա-
ւորներ և հասնելով մելիքի տան դարպասին՝ կանգ-
նեցին: Նոքա օրւայ պահապաններն էին, որոնք հըս-
կում էին գիւղի առջև բարձրացած բլրի վերայ: Նո-
քա շտապով իջան ձիաներից, կապեցին նոցա զրանը
և իրանք առանց դուռը բխելու մօտն ներս, մելիքի
տան բակը: Նրբ վերջինքս դուրս գալով սենեկից՝
պահապանների գունատւած դէմքին նկատեց սար-
սափի արտայայտութիւն, ինքը ևս նախազգալով

աղէտը, սպրիւնեց և հազիւ հազ կարողացաւ հարցնել:

— Հը, ի՞նչ կայ, աղե՛րք, ի՞նչ է պատահել:

— Ձալաբիները գալիս են... Արաքսի ակերը
սևացել են... Թողը երկինք է պատել... իրար բերնից
խօսք խլելով՝ շնչասպառ արտասանում էին եկւորները:

Մելիքը կանչել տւեց գզիրին, որ իսկոյն եկաւ:

— Այ տղա, շո՛ւտ արա, ընկի՛ր փողոցէ փողոց,
գոռա՛, բղաւ՛իր, ինչքան ձայն ունիս, ասա՛ թէ չա-
լաբիները գալիս են, գիւղի տակին են արդէն, թո՛ղ
զգաստ կենան, թւանգներ ու զէնքները թո՛ղ պատ-
րաստ պահեն, կանանց և երեխայոց թո՛ղ եկեղեցու
գաւիթը ուղարկեն... դէ՛, վազի՛ր: Բաց կանգնի՛ր,
լսի՛ր ի՞նչ եմ ասում: Առաջ մի մարդ կ'ուղարկես
ժամի զանգալները տան: Դէ՛, գնա՛, էլ մի՛ կանգ-
նիլ: Նո՛ւտ:

Մինչդեռ մելիքը հրամաններ էր տալիս գզիրին,
ձիաւորները իրար ետեւից հեծան իրանց ձիաները
և դէպի իրանց տները քշեցին: Մելիքն էլ, երբ
գզիրը հեռացաւ, բակի դուռը պինդ փակեց և մօտ
սենեակը պատրաստութիւններ տեսնելու:

Մի քանի րոպէից ետ յուսահատ կերպով արդէն
հնչում էին եկեղեցու զանգալները: Գիւղը խառնւել
տակն ու վերայ էր եղել:

Այդ միջոցին Գրիգորի տան առջև փողոցում
խմբւած՝ ներկայ գրութեան առիթով խորհուրդ էին
անում Տէր-Սիմոնը, աղա Թումանը, Գրիգորը, պարոն
Սարգիսը, շուռ-Նիսիսը, Մինասը և մի քանի երի-

տասարդներ, որոնց թւում կար և արջ-Բա-
ղալը:

Պրիգորը առաջարկում էր երիտասարդներին
հեծել ձիաները, դուրս գալ գիւղից և մօտիկուց մի
հաստատ լուր բերել թշնամիների մասին: Բայց բո-
լորն էլ հրաժարւում էին. թէկուզ վիզները կտրի՛ր՝
չե՛ն գնալ, որ չե՛ն գնալ:

— Ով ուզում է, մեր ձին էլ պատրաստ է, —
խօսում էր աղա Թումանը, — գնո՛ւմ էք թէ ոչ: Հը՛ր,
ի՛նչ էք սուս արել, ինչի՞ց էք վախենում: Ա՛յ ձեզ
քաջ ու կտրիճ ասողին... Ա՛յ տղե՛րք, հօ ձեզ չենք
ասում գնացէ՛ք կռիւ մտէք նրանց հետ. ին՞չ էք
հոգի տալիս...

Այսպէս սրտնեղւած խօսում էր աղա Թումանը,
զիմեւում այս ու այն երիտասարդին:

— Ափսո՛ս իմ ջահիլութիւն, — հոգոց հանելով
ասաց Պրիգորը, — ես սրանց մոռնաթը վեր կ'առնէի՞:
Ձի էլ ես տալիս, թւանգ էլ ես տալիս, փող էլ ես
տալիս, չե՛ն գնալ, որ չե՛ն գնալ: Հը՛ր, ո՞վ է գնում,
ձայն տայ, ես էլ էս ալեւոր տեղովս դամ հետները:

Բայց պատասխան չկար: Ամեն մարդ լուռ էր և
սպասում էր մէկը միւսին:

— Ձե՛ք գնում էլի, — յուսահատական ձայնով
հարցրեց աղա Թումանը, — ա՛յ ձեր կերածը հարամ
լինի, հա՛, — ասաց և դառնացած սրտով շտապով
գնաց տուն: Նորա վախը խառնեց բարկութեան
հետ, և իւր փղձուկը նա մէկի վերայ պիտի թափէր:

Եւ նա այդ արաւ, ինչպէս շուտով կը տեսնէ ընթեր-
ցողս:

— Հը՛ր, դո՛ւ ինչ ես գլուխդ քաշ գցել, — ասաց
Նիազը Բաղալին, — ուրիշ ժամանակ կարմրած աչ-
քերդ էնպէս չու՛մ ես, որ մարդ վախենում է, ձայնդ
երկինք ես հասցնում, մի էս դժւար միջոցին էլ ցոյց
տո՛ւր հնարդ է՛: Հը՛, գնո՛ւմ ես թէ չէ, հարցրեց
Նիազը Բաղալի ետիցը պինդ բռնելով:

— Ձէ՛, չէ՛, չէ՛, թէկուզ վիզս կտրես, պատաս-
խանեց Բաղալը՝ ետ ետ քաշելով: Մենք, երկու
երեք տեղով, ի՞նչ կարող ենք անել հազարների
հետ:

— Բաս եթէ ես էս կաղ տեղովս գնամ, քո նա-
մուսը վեր կ'առնի՞ — ասաց Նիազը, — եթէ ես էս պա-
ռաւ շուն տեղովս քեզ նման արջից ղոչաղ դուրս
գամ, դու չե՛ս ամաչիլ:

— Ա՛ մարդ, հօ քեզ չենք ասում գնա՛ կռիւ
արա նրանց հետ, — ուզում էր խրախուսել պարոն
Սարգիսը: Մեր ասածը...

— Ձէ՛, չէ՛, չէ՛, ես գնացողը չեմ: Ով ուզում
է գնայ: Ես հիմա տուն եմ գնում:

Ձը նայելով աղաների խրախուսանքին և առատ
խոստումներին, չը նայելով քահանայի օրհնութեան և
քաջալերութեան խաչի և Քրիստոսի անունով, ոչ-ոք
սիրտ չ'առաւ գիւղից դուրս գալու:

Այդ խմբից իւրաքանչիւրը անկեղծ բարկացած
էր միւսների վերայ, իւր մտքումը խոր ատելու-

Թեամբ չիշոցներ էր տալիս սորան նորան, վախկոտ նապաստակներ էր անւանում բոլորին:

Այսպէս սրտնեղւած խումբը սկսեց ցրել, և ամեն մէկը գնաց իւր տուն հարկաւոր զգուշութիւններ գործ դնելու:

Այժմ, ընթերցո՛ղ, արի՛ միասին ուշի ուշով դիտենք թէ ինչ է կատարւում գիւղում:

Ահա կոտւրների վերայ շտապով դիզում են քար ու կաշկառ՝ Թշնամիներին քարկոծելու, աղի և պղպեղի հետ խառնած մոխիր՝ կուրացնելու համար, բերում դարսում են եռ գալիս ջրով լի կաթսաները՝ Թշնամիներին այրելու համար: Անտեղ տղամարդիկ լցնում կամ դրստում են իրանց հրացանները: Սենեակների մէջ վառւած մոմերի առջև ահա աղօթում են կանայք և աղջկերք, և երեխաները ձիչ ու աղաղակով պինդ կպել են մայրերից և քոյրերից: Գրիգորը, պարոն Սարգիսը և նոցա նման շատերը ներքնատանը, խաւար զաղտատեղիներում, փորել են տալիս գետինը՝ Թանկագին իրեզնէներով լի սնդուկները և կարասները հողաթաղ անելու համար: Փողոցներով վազվզում են կանայք դէպի եկեղեցու բարձր պարիսպներով շրջապատւած լացնարձակ գաւիթը. փոքրիկներին՝ զրկած կամ ձեռքից բռնած քարշ են տալիս իրանց հետ: Շատ կանանց հերարձակ մագերից ջուր է թափւում. անշուշտ վատ լուրը լսած րուպէին նոքա լւացւելու վերայ են եղել: Եկեղեցու գաւիթը լցւում է կին և մանուկներով, եկե-

ղեցու ներսն են տանում ծանրաբեռնւած սնդուկներ և արկղներ: Սեղանի առաջ մոմեր են վառւում իրար ետեից, և կանայք ծունր իջած արտասուելով աղօթում են բարեխնամ Աստուծուն: Որդին լալիս է, մայրը սիրտ է տալիս նորան, հայրը յուսադրում կամ հաշոյում է երկուսին էլ և այնու ամենայնիւ շարունակում իւր տենդային աշխատանքը: Իւրաքանչիւրը իւր երեակայութեան մէջ արդէն ղինւորւած Թշնամի է տեսնում կանգնած իւր առջև. Թշնամին կրակում է դարաբխան, Թշնամին զարկում է կեռ դաշոյնը, և մեծ ու փոքր, մարդ ու կին, աղջիկ ու տղայ—բոլորեքեան ընկնում են իրար ետեից, և արեան առուները մեծանում աճում, թափւում են կառններից դէպի ցած, անցնում են փողոցներով և ներկում ամեն տեղ, ուր երևում են արիւնաբոս հրէշները... Կարծես յունական Գորգոնները կեանք էին առել նորից և ահ ու դող ու սարսափ էին ձգում բոլորի սրտերը իրանց մագերի օձային վշշիւններով:

Այս միջոցին Մինասը իւր կնոջ և երեխաներին ուղարկեց եկեղեցին, իսկ ինքը բակի և սենեակների դռները պինդ փակեց, առաւ իւր մի հրացանը, իսկ միւսը զանազան իրերի հետ թազգրեց մի այնպիսի զաղտատեղում, որտեղից սատանաների թագաւորն էլ կարող չէր բան դուրս քարշել. յետոյ բարձրացաւ կոտւրը և հերոսաբար սկսեց սպասել Թշնամուն:

Բայց ծիծաղելի և միևնոյն ժամանակ խղճալի

տպաւորութիւն էր անում այդ միջոցին արջ-Բաղալը: Նա ևս կանգնած է իւր կիսաւեր տնակի տանիքի վերայ. մի ձեռքում բռնած է մի երկայն հովւական մահակ, միւս ձեռքում—պապից մնացած մի ժանգոտած խանչալ: Նա հրացան չունի: Մինասի թագցրած հրացանը, ի հարկէ, կարևոր էր Բաղալի համար: Բաղալը տեղից չէ շարժւում. նա այնպէս ուշադիր է և ականջները այնպէս սրած, ինչպէս բարակ որսի բոյէին: Նա դէմքը յառած է դէպի այն կողմը, որտեղից պիտի երևան թշնամիները: Նորա սիրտը սաստիկ տրոփում է: Աղօթք և յիշոցները խառնւում են նորա դողդոջ շրթունքին:

Այո՛, շատ խղճալի էր Բաղալը:

Աղա Թումանն էլ այդ ժամանակ որքան վախեցած էր, նոյնքան էլ կատաղած էր իւր շան վերայ, որ նախընթաց գիշերը գալիք աղետը գուշակեց իւր ոռնալով: Նա իւր շարութիւնը արտայայտեց շատ հասարակ կերպով՝ պարպեց բեռները, շունը կնձկնձաց, երկու երեք անգամ պտոյտ եկաւ և ընկնելով խոտի վերայ՝ սկսեց դիաթաւալ լինել:

Բայց ինչ համակրելի էր այդ ժամին Նիազը: Ինչպէ՛ս նա կարողանում էր քաջալերել, սիրտ տալ իւր տանեցիներին, ժպիտ անգամ խաղացնել նոցա սարսափած դէմքին: Նոյն իսկ մահը թեթեւանում էր նորա ներկայութեամբ, նոյն իսկ սարսափը կորցնում էր իւր ոյժը, և սիրտը սկսում էր աւելի հանդարտ բարախել:

Այս տաղնապի միջոցին գիւղի զլխաւոր ճանապարհի դարպասով ներս մտաւ մի երիտասարդ ձիաւոր, որ վերադառնում էր մօտակայ գիւղից: Ի հարկէ, նա մօտիկուց տեսած պիտի լինէր Չալաբիների հրոսակները: Բայց երևակայեցէ՛ք նորա զարմանքը, երբ նա փողոցում տեսաւ իրարանցում, անցորդների դէմքին նշմարեց սարսափ, երբ նա լսեց լաց և գոռում-գոչում և եկեղեցու զանգակների յուսահատ ղողանջիւնը: Նա իսկոյն հասկացաւ, որ այստեղ կայ մի մեծ թիւրիմացութիւն, որ պէտք է շուտով փարատել: Հարց ու փորձից նա իմացաւ գործի էութիւնը: Նորա շրթունքին խաղացող ժպիտը և դէմքի հանդիստ արտայայտութիւնը կատարեալ զարմանք պատճառեցին հանգիպողներին, որոնք անհամբեր հարցումներ էին տալիս նորան թէ ո՛րքան է արդեօք Չալաբիների թիւը, թէ ի՞նչ է նշանակում նորա անհոգ ժպիտը և այլն:

— Ոչինչ չը կայ, ոչինչ չը կայ, մի՛ վախէք, Չալաբիներ չեն, զարաչիներ են, զարաչիներ:

Այս խօսքերը արտասանւում էին այնպիսի եղանակով, որ նոքա, ըստ երևութին, պիտի փարատէին ամենայն մի կասկածանք. և իսկապէս շատերը հաւատում էին և հանգստանում: Բայց կային և այնպիսի տարօրինակ մարդիկ, որ այս խօսքերը լսելուց յետ, աւելի ևս արագացնում էին իրանց քայլերը, Ասուած գիտէ թէ ինչո՞ւ, կարծելով, որ այն մարդը այսպիսով կամենում է սիրտ տալ նոցա, որ չը սարսափեն անխուսափելի մահից:

Մի քանի բուսական յետ ձիաւորը շրջապատեց ամբողջով, և այս ու այն կողմից հարցումներ էին տեղում նորա վերայ:

— Զի՞շտ ես ասում, Ստեփան, դու քո հոգին մի՛ խաբիլ, Չալաբինե՞ր ևն թէ զարաչիներ:

— Իմ արեւը, ձեր արեւը, ոչինչ չը կայ, հանգիստ կացէ՛ք: Շուն շան որդի զարաչիներն են...

— Օրհնե՛ս դու, Ստեփան, օրհնե՛ս, էս ի՛նչ օրում էր մեր գիւղը:

— Իրանց հէրն անիծած, զրանց հէրը. զարաչիները մեզ էս օրս գցեն:

Տղերք, էն օյնը զանք էդ շուն շանորդիների գլուխը, որ հեշտ հեշտ չը մոռանան իրանց արածը ու էս մեր կողմերը էլ չը համարձակեն ոտ դնել:

Այսպէս բարկացած խօսում էին շատերը երիտասարդներից: Նոցա սրտերը՝ երկիւղից ազատւած այժմ լցւել են վրէժխնդրութեան ծարաւով:

Որովհետեւ հակառակորդները պիտի լինէին անգէն, գլխաւորապէս կանաչք և երեխաներ, այդ պատճառով ռսակալ երիտասարդներից իւրաքանչիւրը առասպելական հերոսի նման զգում էր, ի՛նչպէս աւելանում էր ոյժը իւր բազուկների մէջ և հասնում գերբնականութեան աստիճանին: Ամեն մէկը այդ ժամանակ իրան վաղը էր զգում:

Մերերը հեռացան, որովհետեւ նոցա ծեծելու և ծեծւելու ժամանակը վաղուց է անցել. աղաները նոյնպէս քաշեցին իրանց տները, որովհետեւ արդէն

կալին քաջ տղերք, որոնք կարող էին առանց մեծամեծների օգնութեան էլ գլուխ դնել զարաչիների հետ: Վրիժառու երիտասարդները, որոնց մէջ աչքի էր ընկնում Բագալը՝ վարագի նման կատաղած և չիշոցները բերնին, շտապով ուղղեցին կողմ քաջները դէպի գիւղի գլխաւոր զարպասը, որանդից պէտք է գիւղը մոնէին զարաչիները:

Որպիսի արագութեամբ տարածւել էր բռնաբեր լուրը և սարսափի մէջ ձգել բոլորին, նոյնպիսի արագութեամբ տարածւեց և ուրախալի համբաւը և հանգըստացրեց բոլորի սրտերը: Մտքով դիւղը ծիծաղեց հսկայական կենդանի ծիծաղով: Եթէ, թափւում էին արցունքներ, անսահման ցնծութեան արցունքներ էին նոքա:

Մի քանի բուսական գիւղի գլխաւոր զարպասով սկսեցին ներս թափւել զարաչիները, մի ահագին խառնիճաղանձ բազմութիւն չը տեսնւած, չը լուսւած ամբողջ գաւառում: Այն ո՞ր սատանան փչեց այդ ողորմելիների խելքին այնքան բաժնեւոր խմբով, որ ել այդ կողմից, այն էլ այն ժառանգ, երբ ամեն մի սեւ կէտի որ երևում էր Արաքսի ափին, երկիւղի և սարսափի առիթ էր տալիս գիւղի օրսպահ պահապաններին: Գուցէ դա մի խառն էր միայն, որ կամեցաւ խաղալ գիւղացիների և զարաչիների հետ մի որ և իցէ չարածծի կախարդ՝ նստած մի անտեսանելի զդեակում, որ՝ տաղտկացած ամառւայ մեռելալին թմրութիւնից՝ ցանկացաւ գէթ մի անգամ մի լի սրտով ծիծաղել և հրճւել: Բայց այդ խաղը թանկ նստեց գիւ-

դացիներին, սակայն նորա ամբողջ ծանրութիւնը ընկաւ զարաշխների վերայ, ինչպէս այդ շուտով կը տեսնենք:

Երեակայի՛ր, ընթերցո՛ղ, մի խառնափնթոր, անկարգ քարւան, որի մի ծայրը կորչում է մարդու աչքից, որ ի՛նչ խառնիճաղանճ աղմուկով, ի՛նչ սարսափելի փոշի կանգնեցնելով՝ դանդաղաքայլ առաջ է գնում գիւղի գլխաւոր փողոցով: Որքա՞ն աններդաշնակ, ի՛նչ վայրենի երաժշտութիւն է բարձրացել այս կիսամարդկային բազմութիւնից: Ահա վերին ծայրում մի կարճահասակ, կոլով և բաւականին տգեղ կին՝ մէջքիցը լացն գօտիով կապած մի երկու երեք տարեկան երեխայ, որի միայն գլուխն և ուսերն են երևում: Նորա ետեւից հետևում է մի մարդ, նոյնքան տգեղ և նոյնքան կոպիտ, որքան և կինը. նա ձախ ձեռքում բռնած է մի հաստ շղթայ, իսկ շղթայից կապւած ծուռ ու մուռ և տարտամ քարշ է գալիս մի ահադին արջ: Ահա մի այլ կին՝ ձեռքին բռնած մի քանի փոքրիկ մաղեր և նորա հետ միասին մի քանի իշաներ՝ բարձւած աւելի մեծ մաղերով: Այնտեղ մի ջահիլ տղայ քարշ է տալիս իւր երեւից պարանով կապած մի պտուռ կապիկ՝ կարմիր շապիկ հագցրած ետեւից: Ահա մի քանի կանայք՝ հագուստները հնամաշ և ձեռքները պարապ. դոքա էլ երեւի բախտ գուշակողներ են: Նոքա խառնւած են ձիաների, մատակների խմբի հետ:

Շների էլ թիւ չկայ: Նզների մէջքից անցարմար կերպով կապկապւած են հաւ ու աքաղաղներ, որոնք

լուռ գլուխները կախ արած՝ համբերութեամբ տանում են իրանց վիճակը, և անցորդի վերայ այն տպաւորութիւնն են գործում թէ «տեսէ՛ք մեզ ի՛նչ Երեն գցել այս վայրենիները»: Երիտասարդների աչքին կընկնէին դոցա մէջ ջահիլ, 14—15 տարեկան, փոքրահասակ աղջկերք, սև ու հերարձակ մաղերով, սև ու կրակոտ աչքերով, լացն ու կարճ շրջագեւտով. դոքա «թրուբներ» են, այսինքն պարողներ: Այս բազմութեան նպատակն էր՝ բաժան բաժան ցրւել շրջակայ գիւղերում և տունէտուն ընկնելով՝ պարողը պիտի պարէր, վաճառողը վաճառէր, հմայողը հմայէր, մուրացողը մուրար, մի խօսքով այս բոլոր աղմուկից պիտի դուրս գար փող, իբրև ձմեռւայ պաշար այդ կիսավայրենի, կիսամերկ մարդկանց և անասունների համար:


Իսկապէս ես դժւարանում եմ այստեղ մի որ և է յանցանք տեսնել այդ խեղճերի կողմից: Ինչպէս մեզնից ամեն մէկը, այդ ամբոխը հաց էր որոնում՝ քաղցած չը մեռնելու համար:

Բայց Դ. գիւղի հասարակութիւնը այդպէս չը դատեց: Իսկն ասած՝ նա չը դատեց էլ: Ղարաշիները պատճառ եղան իւր անհանգստութեան և լացի, ուրեմն նոցա էլ պէտք է անհանգստացնել և լացացնել: Ել նոքա մեղաւոր են, անմեղ են, այդ նորա բանը չէ: Ինչո՞ւ նոքա եկան հէնց այն օրերը, երբ Չալաբիներին էին սպասում: Վերջապէս ի՛նչ է նշանակում այն շուն, արջ ու կապիկների ամբողջ բազմութիւնը: Բայց, ի հարկէ, ի՛նչ ասել կ'ուզէ, ո՞րտե-

ղից իմանային այն ուղիքները թէ մի որ և իցէ
Դ. գիւղում սարսափելի լուր է տարածւել և այդ
լուրը հաստատուել են լուսինը՝ արեան գոյնը՝ շունը՝
իւր ռունալով, և բուերը՝ իրանց վայունով:

Ինչ և իցէ, գիւղի տաքարիւն երիտասարդները՝
միացած այնտեղ գտնուող մի գործարանի թուրք բան-
ւորների հետ՝ յարձակւեցին զարաչիների վերայ:
Մարդիկ սկսեցին պաշտպանւել և գոռոց բարձրացնել,
կանաչք անիծում էին և նոյնպէս պաշտպանւում:
Նոցա աղաղակին միացան և երեսաների ու զանա-
զան կենդանիների ականջ խլացնող ձայները, և այս
բոլորից բարձրացաւ մի այնպիսի աղմուկ, որպիսին
ոչքէ զուցէ լսած չէ իւր օրում, եթէ չը հաշտենք
գլխիք գնացած ներին: Մեծ ողների մէջ աչքի էր
չնշում արջ-Բադալը, որ կուռում էր մի առանձն
հաճութեամբ և ոգևորութեամբ, որ իւր հարած-
ները հասցնում էր աջ և ձախ ոտով և ձեռքով: Շատ
արտասուք և արիւն թափւեց այդ օր այդ կուռում,
և, ինչպէս ասում էին, մի աթնակեր երեսայ էլ
զոհ գնաց և իւր անմեղ արիւնով քաւեց իւր հայրերի
և մայրերի չը գործած ջանքանքը:

Եւ իբրեւ վերջաբան այս կախարդական խաղի,
երկինքը թխպեց, որոտաց, անձրեւ եկաւ, գիւղը
կենդանացաւ, մարդիկ աշխուժացան, և ամբողջ օրը
պատմութիւններ էին լսում կեղծ Չալարիների
մասին, և ամեն տեղ բարձրացած էր բրբիջ և ծիծաղ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0339541

